ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հուլիսի 10-ից 12-ը Ֆրանսիա գործուղման վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Նաիրուհի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիա, Փարիզ, 2023թ. հուլիսի 10-ից 12-ը

4. **Հրավիրող կողմը.**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (այսուհետ՝ ՏՀԶԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայման և շահույթի տեղաշարժ» ծրագրի (այսուհետ՝ BEPS) ներառական հարթակի տարեկան համաժողովին մասնակցություն

6. **Քննարկված թեմաները.**

• BEPS 1-ին գործողության իրականացման համար՝ տնտեսության թվայնացումից բխող հարկման մարտահրավերների երկմակարդակ լուծման համար արդյունքների հայտարարությունը, որն ընդունվեց BEPS ներառական հարթակի բոլոր անդամների կողմից,

• Միջազգային հարկային քաղաքականության հետագա ուղղությունները,

• Արդյունքների հայտարարության տեղայնացման համար տեխնիկական աջակցության հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Տեղի են ունեցել մի շարք աշխատանքային քննարկումներ BEPS քարտուղարության փորձագետների հետ, որոնց շրջանակներում քննարկվել են ՀՀ ՊԵԿ կողմից ներդրման ենթակա գործողությունների ընթացքը, հետագա ուղղությունները: Մասնավորապես, BEPS 13-րդ և 14-րդ գործողությունները քննարկվել են համապատասխան փորձագետների հետ, որի արդյունքում BEPS 13-րդ գործողությունն արդեն իսկ ընդունված և համապատասխանում է միջազգային ստանդարտների, իսկ 14-րդ գործողության ներդրման աշխատանքները գտնվում են վերջնական փուլում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում հաստատվել է BEPS 1-ին գործողության իրականացման համար՝ տնտեսության թվայնացումից բխող հարկման մարտահրավերների երկմակարդակ լուծման համար արդյունքների հայտարարությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդունված հայտարարությունն աննախադեպ շրջադարձ կարող է լինել էլեկտրոնային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համաշխարհային եկամուտների հարկման ժամանակ, որը կհանգեցնի թե՛ կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի, թե՛ տրանսֆերային գնագոյացման կարգավորումների փոփոխությունների, նոր բազմակողմ կոնվենցիաներին միանալու պարտավորությունների, ուստի առաջարկվել է նախատեսել համապարփակ տեխնիկական աջակցություն, որը վերաբերելի կլինի բացառապես ՀՀ-ին և թույլ կտա ճիշտ գնահատել կարողությունները ժամանակին համապատասխան գործընթացներին ինտեգրվելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

18/07/2023թ.